# <u>ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ</u>

Սնքար բնակավայր

03.12.2025 թ.

Սույն թվականի դեկտեմբերի 3-ին՝ ժամը 12:00-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, տեղի ունեցավ «Մառա և դուստրեր» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Տավուշի մարզի Իջևան համայնքի Սնքար բնակավայրում դպրոցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Վարդան Հարությունյանը: Նա նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները: Հարությունյանը ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Դպրոցի նախագծման աշխատանքներ իրականացնող ընկերության ներկայացուցիչները ներկայացրեցին կառուցման վերաբերյալ տեղեկատվություն, նշեցին կառուցվող դպրոցի տեխնիկատնտեսական ցուցանիշները, ներկայացրեցին շինարարության աշխատանքների կազմակերպման միջոցառումները և շինարարության փուլում նախատեսվող աշխատանքները:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելուց հետո Հարությունյանը խոսքը փոխանցեց ներկաներին՝ իրենց առաջարկությունները, դիտողությունները ներկայացնելու և հուզող հարցերը հնչեցնելու համար: